

3. Պետրոսյան , 2. Մազլուչանց և 3. Նյուրի

Սույն գլխի նպատակն է ներկայացնել ՀԺԱՀ ընտրանքային համակցության ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական պատկերը: Հարցված կանանց և տղամարդկանց հիմնական բնութագրիչների վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է զեկույցում ներկայացված հետազոտության արդյունքների մեկնաբանման համար և կարող է հանդես գալ որպես հետազոտության ներկայացուցչականության մոտավոր ցուցիչ:

3.1 Հարցվողների հիմնական բնութագրիչները

Այդուսակ 3.1-ը ներկայացնում է 15-49 տարեկան հարցված կանանց և 15-54 տարեկան հարցված տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների՝ ներառյալ տարիքը, ամուսնական կարգավիճակը, բնակության վայրը, կրթական մակարդակը, էթնիկական պատկանելիությունը և կրոնը: Ինչպես նշվել է առաջին գլխում 15-49 տարեկան բոլոր այն կանայք, ովքեր սովորաբար բնակվել են կամ ներկա են եղել տնային տնտեսությունում հարցմանը նախորդող գիշերը, համապատասխանել են ՀԺԱՀ-ի հարցման նպատակներին: 15-54 տարեկան տղամարդիկ հարցվել են յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսությունում: **Որպեսզի չկատարվի հարցվողների կրկնահաշվարկ, զեկույցում ներկայացված աղյուսակները հիմնված են դե ֆակտո բնակչության վրա, այն է՝ նրանք, ովքեր հարցմանը նախորդող գիշերը գիշերել են տնային տնտեսությունում:**

Ընտրանքում ներկայացված արական և իգական սեռի բնակչությունը հավասարապես բաշխված է ըստ տարիքի՝ որոշակի ակնառու բացառություններով: 15-19 տարեկան կանանց թվաքանակը 50 տոկոսով ավելին է, քան 25-29 կամ 30-34 տարեկաններինը (18 տոկոս՝ 12 տոկոսի դիմաց): 15-19 (15 տոկոս) և 40-44 (16 տոկոս) տարեկան տղամարդկանց թվաքանակը կրկնակից ավելի է, քան 50-54 (7 տոկոս) տարեկաններինը:

Հարցման պահին և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտավորապես երկու երրորդն ամուսնացած է եղել: Բաժանված, ամուսնալուծված կամ այրի է եղել կանանց 7 տոկոսը՝ տղամարդկանց 2 տոկոսի դիմաց: Կանանց 29 և տղամարդկանց 31 տոկոսն երբեք ամուսնացած չի եղել:

Հարցվողների մեծամասնությունը, մոտավորապես 60 տոկոսը, ապրում է քաղաքային բնակավայրերում: Երևանում բնակվում է հարցվողների ավելի քան մեկ երրորդը: Հարցվողների բաշխումն այլ մարզերում փոփոխվում է հետևյալ կերպ. Արարատում 10 տոկոս, Վայոց Ձորում՝ ոչ ավելի քան 2 տոկոս:

Բացառությամբ 5 կանանցից՝ ընտրանքում մնացած ընդգրկվածները հաճախել են դպրոց: Ինը տոկոսը հաճախել է միայն տարրական/միջին դպրոց, 36 տոկոսը հաճախել է միջնակարգ դպրոց, 36 տոկոսը՝ միջնակարգ-մասնագիտական հաստատություն և 19 տոկոսն ունի առնվազն որևէ բարձրագույն կրթություն: Տղամարդիկ ունեն մոտավորապես նույն կրթական մակարդակը, ինչպիսին կանայք:

Հայաստանը էթնիկապես համասեռ երկիր է: Ըստ էության, բոլոր հարցվողները եղել են հայ, և պատասխանել են, որ նրանց կրոնը քրիստոնեությունն է:

Աղյուսակ 3.1 Հարցվողների հիմնական բնութագրիչները

Կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Կշռված տոկոս	Կանանց թվաքանակը (մարդ)		Կշռված տոկոս	Տղամարդկանց թվաքանակը (մարդ)	
		Կշռված	Չկշռված		Կշռված	Չկշռված
Տարիքը						
15-19	18.0	1160	1168	15.3	263	266
20-24	15.7	1007	991	12.5	215	223
25-29	12.0	769	763	11.3	194	192
30-34	11.9	763	764	11.9	205	202
35-39	15.0	962	972	13.8	237	237
40-44	14.7	947	966	16.0	275	270
45-49	12.8	822	806	11.8	203	209
50-54	4.2	4.2	4.2	7.3	126	120
Ամուսնական կարգավիճակը						
Երբևէ չամուսնացած	28.8	1851	1796	30.8	530	534
Ամուսնացած	63.7	4098	4173	67.3	1157	1155
Ապրում են միասին	0.4	27	25	0.2	4	4
Ամուսնալուծված, բաժանված	3.8	245	241	1.3	22	21
Այրի	3.3	210	195	0.3	5	5
Բնակավայր						
Քաղաքային	61.3	3942	3545	59.6	1024	943
Գյուղական	38.7	2488	2885	40.4	695	776
Մարզը						
Երևան	34.3	2206	1604	33.9	582	448
Արագածոտն	4.3	279	484	4.5	78	139
Արարատ	10.0	642	564	10.3	177	139
Արմավիր	8.6	553	495	10.0	172	145
Գեղարքունիք	7.5	484	489	7.2	124	117
Լոռի	7.6	489	409	6.9	119	87
Կոտայք	7.9	505	445	8.0	137	127
Շիրակ	9.5	611	492	9.3	161	139
Սյունիք	4.2	271	494	3.8	65	119
Վայոց ձոր	1.8	113	458	1.5	25	101
Տավուշ	4.3	278	496	4.6	79	158
Կրթություն						
Տարրական/միջին	9.2	593	612	14.2	245	243
Միջնակարգ	36.4	2341	2475	29.7	510	540
Միջնակարգ մասնագիտական	35.7	2295	2271	34.2	588	583
Բարձրագույն	18.7	1201	1072	21.9	376	353
Ազգություն						
Հայ	97.9	6298	6304	98.5	1693	1696
Այլ	2.1	132	126	1.5	26	23
Կրոնը						
Քրիստոնյա	98.6	6339	6329	98.3	1689	1683
Այլ	1.4	91	101	1.7	30	36
Ընդամենը	100.0	6430	6430	100.0	1719	1719

ԿԶ: Կիրառելի չէ

Նշում. Կրթական կատեգորիաները վերաբերվում են երբևէ հաճախած կրթական հաստատության ամենաբարձր մակարդակին՝ անկախ այդ մակարդակն ավարտելու կամ չավարտելու հանգամանքից:

3.2 Հարցվողների կրթական մակարդակը

Աղյուսակներ 3.2.1-ը և 3.2.2-ը ցույց են տալիս կին և տղամարդ հարցվողների կրթական մակարդակն ըստ ընտրված հիմնական բնութագրիչների: Քաղաքաբնակ կանայք ունեն ավելի բարձր կրթական մակարդակ, ի տարբերություն գյուղաբնակ կանանց 8 տոկոսի; քաղաքաբնակ կանանց ավելի քան մեկ չորրորդը (26 տոկոս) ունի համալսարանական կամ հետբուհական կրթություն: Երևանում և Շիրակում գրանցվել է համալսարանական կամ հետբուհական կրթություն ունեցող կանանց ամենաբարձր համամասնությունը (համապատասխանաբար՝ 31 տոկոս և 22 տոկոս), մինչդեռ Գեղարքունիքի կանանց միայն 6 տոկոսը և Արարատի ու Վայոց Ձորի կանանց միայն 9 տոկոսն են ստացել համալսարանական կրթություն:

Աղյուսակ 3.2.1 Կանանց կրթական մակարդակն ըստ հիմնական բնութագրիչների								
Կանանց տոկոսային բաշխումն ըստ ամենաբարձր կրթական մակարդակի և ուսում ստանալու համար ծախսված տարիների մեդիանն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)								
Հիմնական բնութագրիչներ	Ամենաբարձր կրթական մակարդակը						Կանանց թվաքանակը (մարդ)	Ուսում ստանալու համար ծախսված տարիների մեդիանը
	1-8 տարի	9-10 տարի	Միջնակարգ գիտական	ԲՈՒՀ համալսարան	Ետբուհական	Ընդամենը		
Տարիքը								
15-19	22.6	51.0	14.4	11.9	0.0	100.0	1160	9.2
20-24	8.2	30.2	36.2	25.1	0.4	100.0	1007	11.3
25-29	3.5	35.8	40.2	19.7	0.8	100.0	769	11.3
30-34	4.0	32.1	43.9	19.2	0.8	100.0	763	11.4
35-39	5.1	35.7	42.8	16.3	0.1	100.0	962	11.2
40-44	7.2	34.6	41.7	16.3	0.1	100.0	947	11.1
45-49	8.8	31.0	38.0	22.0	0.3	100.0	822	11.3
Բնակավայր								
Քաղաքային	6.3	29.4	38.6	25.1	0.5	100.0	3942	11.4
Գյուղական	13.8	47.5	31.1	7.7	0.0	100.0	2488	9.7
Մարզը								
Երևան	6.1	27.6	35.8	29.7	0.8	100.0	2206	11.6
Արագածոտն	10.5	46.5	32.0	10.5	0.4	100.0	279	9.8
Արարատ	10.1	42.9	37.9	9.0	0.0	100.0	642	9.9
Արմավիր	16.2	42.2	30.5	11.1	0.0	100.0	553	9.7
Գեղարքունիք	15.5	47.9	30.3	6.3	0.0	100.0	484	9.7
Լոռի	9.0	40.3	37.4	13.2	0.0	100.0	489	10.0
Կոտայք	10.6	34.4	42.5	12.6	0.0	100.0	505	10.4
Շիրակ	6.1	35.8	36.2	21.7	0.2	100.0	611	11.2
Սյունիք	7.5	37.2	43.1	12.1	0.0	100.0	271	10.6
Վայոց ձոր	8.1	52.8	30.3	8.5	0.2	100.0	113	9.8
Տավուշ	12.3	41.1	31.7	14.9	0.0	100.0	278	9.9
Ընդամենը	9.2	36.4	35.7	18.4	0.3	100.0	6430	10.5

Ինչպես երևում է աղյուսակ 3.2.2-ում, քաղաքաբնակ տղամարդիկ նույնպես հիմնականում ունեն ավելի բարձր կրթական մակարդակ, քան գյուղաբնակները. համապատասխանաբար, համալսարանական կամ ետբուհական կրթություն ունի 29 տոկոսը 11 տոկոսի համեմատությամբ: Շիրակում և Երևանում գրանցվել է առնվազն համալսարանական կրթություն ունեցող տղամարդկանց ամենաբարձր համամասնությունը (համապատասխանաբար՝ 37 և 32 տոկոս), մինչդեռ Լոռիում, Գեղարքունիքում և Կոտայքում այն ամենացածրն է:

Աղյուսակ 3.2.2 Տղամարդկանց կրթական մակարդակն ըստ հիմնական բնութագրիչների

Տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ ամենաբարձր կրթական մակարդակի և ուսում ստանալու համար ծախսված տարիների մեղիանն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Ամենաբարձր կրթական մակարդակը					Ուսում ստանալու համար ծախսված տարիների մեղիանը		
	1-8 տարի	9-10 տարի	Միջնակարգ մասնագիտական	ԲՈՒՀ, համալսարան	Ետբուհական	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)	(%,%)
Տարիքը								
15-19	32.5	39.8	10.4	17.3	0.0	100.0	263	8.8
20-24	21.2	32.6	26.5	19.6	0.0	100.0	215	9.9
25-29	12.6	36.8	31.6	17.7	1.3	100.0	194	10.2
30-34	7.9	32.9	38.4	19.6	1.2	100.0	205	11.3
35-39	6.7	26.1	45.9	20.2	1.1	100.0	237	11.7
40-44	7.6	26.8	45.5	20.0	0.0	100.0	275	11.8
45-49	7.5	17.0	43.6	31.3	0.6	100.0	203	12.3
50-54	15.6	21.4	32.5	27.7	2.8	100.0	126	11.8
Բնակավայր								
Քաղաքային	11.2	26.9	32.6	28.1	1.2	100.0	1024	11.4
Գյուղական	18.5	33.9	36.6	11.0	0.0	100.0	695	9.9
Մարզը								
Երևան	11.6	26.1	30.4	30.6	1.3	100.0	582	11.4
Արագածոտն	10.8	38.1	36.7	14.4	0.0	100.0	78	10.0
Արարատ	12.9	30.9	38.8	16.5	0.7	100.0	177	10.8
Արմավիր	18.6	36.6	29.7	15.2	0.0	100.0	172	9.9
Գեղարքունիք	16.2	36.8	37.6	9.4	0.0	100.0	124	9.9
Լոռի	16.1	28.7	46.0	9.2	0.0	100.0	119	10.6
Կոտայք	18.1	29.1	43.3	8.7	0.8	100.0	137	10.5
Շիրակ	12.9	21.6	28.1	36.0	1.4	100.0	161	12.1
Սյունիք	13.4	28.6	42.0	16.0	0.0	100.0	65	10.8
Վայոց ձոր	4.0	57.4	21.8	16.8	0.0	100.0	25	9.8
Տավուշ	22.8	30.4	31.0	15.8	0.0	100.0	79	9.9
Ընդամենը	14.2	29.7	34.2	21.2	0.7	100.0	1719	10.9

3.3 Զանգվածային լրատվամիջոցների մատչելիությունը

ՀԺԱՀ-ը տեղեկություններ է հավաքագրել կանանց համար հեռահաղորդակցության և տպագիր լրատվամիջոցների մատչելիության վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարևոր է, քանի որ այն կարող է օժանդակել ԾԻԳ-երի ղեկավարներին՝ նախագծելու առողջության, ընտանիքի պլանավորման, սնուցման և այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

Հայաստանի կանանց 88 տոկոսը առնվազն շաբաթը մեկ անգամ դիտել է հեռուստացույց, 29 տոկոսը կարդացել է թերթ և 32 տոկոսը լսել է ռադիո: Զանգվածային լրատվամիջոցները մշտապես մատչելի չեն եղել միայն 9 տոկոսին: Բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի հաճախ են կարդացել թերթ, դիտել հեռուստացույց և լսել ռադիո, քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները: Քաղաքաբնակ կանայք երկու անգամ ավելի հաճախ են կարդացել թերթ, լսել ռադիո, քան գյուղաբնակ կանայք, և նրանց համար վերոնշյալ բոլոր երեք լրատվամիջոցներն էլ երեք ու կես անգամ ավելի մատչելի են եղել, քան գյուղաբնակների համար: Երևանի և Սյունիքի կանայք ամենահաճախակի թերթ կարդացող կան ռադիո լսողներն են եղել:

Բոլոր մարզերում 10-ից ավելի քան 8-ը դիտել է հեռուստացույց ամենաքիչը շաբաթը մեկ անգամ՝ բացառությամբ կանանց, Արագածոտնի մարզում (76 տոկոս): Ընդհանուր առմամբ, Արագածոտնի կանայք և տարրական/միջին կրթություն ունեցող կանայք ավելի քիչ են հակված եղել ունկնդրելու զանգվածային լրատվամիջոցներին, քան մնացածները: 5 կնոջից մոտավորապես 1-ի համար զանգվածային լրատվամիջոցները մատչելի չեն եղել մեկ շաբաթվա կտրվածքով:

Աղյուսակ 3.3 Զանգվածային լրատվամիջոցների մատչելիությունը

Կանանց տոկոսային բաշխումը, ովքեր, սովորաբար թերթ են կարդացել, հեռուստացույց են դիտել կամ ռադիո են լսել առնվազն շաբաթը մեկ անգամ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Զանգվածային լրատվամիջոցների տեսակը					
	Թերթ է կարդում առնվազն շաբաթը մեկ անգամ	Հեռուստացույց է դիտում առնվազն շաբաթը մեկ անգամ	Ռադիո է լսում առնվազն շաբաթը մեկ անգամ	Բոլոր երեք լրատվամիջոցները	Ոչ մի լրատվամիջոց	Կանանց թվաքանակը (մարդ)
Տարիքը						
15-19	29.6	89.3	35.9	16.5	7.7	1160
20-24	34.5	89.3	35.8	17.9	7.0	1007
25-29	29.1	87.4	31.1	14.3	9.8	769
30-34	26.4	88.9	28.3	12.5	7.8	763
35-39	27.6	87.7	31.5	14.6	10.1	962
40-44	27.8	87.4	31.0	13.9	9.3	947
45-49	26.8	88.2	30.3	12.5	9.8	822
Բնակավայրը						
Քաղաքային	36.0	91.0	40.0	20.4	6.3	3942
Գյուղական	18.0	84.2	20.1	5.9	12.6	2488
Մարզը						
Երևան	39.8	92.0	49.6	26.6	5.4	2206
Արագածոտն	12.4	76.0	27.1	5.4	17.6	279
Արարատ	26.1	92.7	27.0	10.3	5.3	642
Արմավիր	23.8	84.0	19.2	8.3	13.5	553
Գեղարքունիք	18.6	83.2	17.2	5.1	13.5	484
Լոռի	25.2	86.8	14.2	4.2	10.5	489
Կոտայք	15.7	86.1	22.5	4.7	11.0	505
Շիրակ	26.8	86.4	16.3	9.8	11.4	611
Սյունիք	38.3	90.5	54.7	25.5	3.8	271
Վայոց ձոր	28.8	91.0	34.9	12.9	5.9	113
Տավուշ	22.0	87.9	27.0	9.9	9.7	278
Կրթությունը						
Տարրական/միջին	12.2	74.7	19.5	5.9	22.0	593
Միջնակարգ	19.1	87.1	25.1	8.0	10.1	2341
Միջնակարգ-մասնագիտական	30.1	90.4	34.2	15.0	6.7	2295
Բարձրագույն	54.8	93.7	48.9	32.1	3.4	1201
Ընդամենը	29.0	88.4	32.3	14.8	8.7	6430

3.4 Զբաղվածություն

Ըստ Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության տվյալների, 2000թ.-ի ընթացքում կանանց գործազրկության մակարդակն անհամամասնորեն է տարածված եղել, նրանք կազմել են գործազուրկների 58 տոկոսը: Պաշտոնապես գրանցված գործազուրկների ավելի քան 90 տոկոսը բնակվել է քաղաքային բնակավայրերում, մասնավորապես, այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Գյումրին, Վանաձորը և Երևանը: Գործազրկության պաշտոնական մակարդակը (որի հաշվարկի հիմքում գրանցված գործազուրկների թվաքանակի և ընդհանուր տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի հարաբերակցությունն է) հանրապետության մակարդակով մոտավորապես կազմել է 12 տոկոս: Գործազրկությունը հատկապես արտահայտված է եղել Շիրակում, Սյունիքում և Լոռիում (համապատասխանաբար՝ 23, 21, և 17 տոկոս) (*ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ.*):

ՀԺԱՀ-մբ հարցվողներին տրվել են մի շարք հարցեր՝ որոշելու նրանց զբաղվածության կարգավիճակը հարցման պահին և զբաղվածության տևողությունը՝ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Աղյուսակ 3.4.1-ը ներկայացնում է վերոնշյալ տեղեկատվությունը՝ կանանց կտրվածքով, ըստ հիմնական բնութագրիչների:

Աղյուսակ 3.4.1 Տնտեսական ակտիվություն


Կանանց տոկոսային բաշխումն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի՝ հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում և աշխատող կանանց աշխատանքի շարունակելիությունն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Աշխատել է վերջին 12 ամիսներին				Կանանց աշխատանքի տևողությունը հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում						
	Աշխատել է հարցման պահին	Չի աշխատել հարցման պահին	2ի աշխատել վերջին 12 ամիսներին	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)	Աշխատել է ամբողջ տարի	Սեզոնային	Աշխատել է ժամանակ առ ժամանակ	Պախան չկա	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)
Տարիքը											
15-19	6.5	0.8	92.8	100.0	1160	25.1	61.2	12.3	1.3	100.0	84
20-24	22.5	1.3	76.2	100.0	1007	66.6	26.5	6.9	0.0	100.0	240
25-29	30.8	1.8	67.4	100.0	769	61.1	35.2	2.7	1.0	100.0	251
30-34	36.8	1.8	61.4	100.0	763	53.2	40.3	5.6	0.9	100.0	295
35-39	42.3	2.3	55.3	100.0	962	58.0	36.5	5.2	0.3	100.0	430
40-44	46.6	2.0	51.4	100.0	947	63.7	30.6	4.8	0.8	100.0	460
45-49	47.3	0.6	52.1	100.0	822	71.3	25.1	3.6	0.0	100.0	394
Ամուսնական կարգավիճակ											
Երբևէ չամուսնացած	20.5	0.9	78.6	100.0	1851	71.0	20.0	7.7	1.3	100.0	395
Հարցման պահին ամուսնացած	35.6	1.7	62.8	100.0	4125	57.0	38.4	4.3	0.2	100.0	1535
Նախկինում ամուսնացած	46.5	2.3	51.3	100.0	455	70.9	22.7	5.3	1.2	100.0	222
Կենդանի երեխաների թվաքանակը											
0	21.6	1.2	77.2	100.0	2121	71.2	20.8	7.0	1.1	100.0	483
1-2	34.6	1.5	63.9	100.0	2590	67.9	26.5	5.1	0.4	100.0	935
3-4	40.6	1.6	57.7	100.0	1630	46.6	49.3	3.8	0.3	100.0	689
5+	46.2	5.1	48.7	100.0	89	29.9	68.0	2.2	0.0	100.0	45
Բնակավայրը											
Քաղաքային	28.8	1.5	69.6	100.0	3942	81.4	10.6	7.4	0.7	100.0	1197
Գյուղական	37.0	1.4	61.6	100.0	2488	35.5	62.0	2.1	0.4	100.0	955
Մարզը											
Երևան	28.2	1.7	70.1	100.0	2206	84.8	6.0	8.3	0.8	100.0	660
Արագածոտն	26.7	0.4	72.9	100.0	279	45.8	46.6	7.6	0.0	100.0	76
Արարատ	24.3	0.5	75.2	100.0	642	53.6	45.0	1.4	0.0	100.0	159
Արմավիր	44.4	2.0	53.5	100.0	553	41.7	54.8	3.0	0.4	100.0	257
Գեղարքունիք	50.5	1.2	48.3	100.0	484	30.0	67.2	2.4	0.4	100.0	250
Լոռի	29.1	4.6	66.3	100.0	489	45.7	45.7	7.2	1.4	100.0	165
Կոտայք	34.8	1.3	63.8	100.0	505	50.3	41.6	7.5	0.6	100.0	183
Շիրակ	22.0	0.4	77.6	100.0	611	94.5	4.5	0.9	0.0	100.0	137
Սյունիք	37.9	0.6	61.5	100.0	271	66.8	30.5	2.6	0.0	100.0	104
Վայոց ձոր	40.8	1.5	57.6	100.0	113	54.1	44.8	0.5	0.5	100.0	48
Տավուշ	40.3	0.6	59.1	100.0	278	52.2	45.8	2.0	0.0	100.0	114
Կրթությունը											
Տարրական/միջին	22.9	1.0	76.1	100.0	593	22.4	71.4	6.2	0.0	100.0	142
Միջնակարգ	23.3	1.5	75.2	100.0	2341	31.7	62.0	6.0	0.4	100.0	580
Միջնակարգ-մասնագիտական	36.1	1.5	62.4	100.0	2295	67.9	26.1	5.3	0.6	100.0	864
Բարձրագույն	45.6	1.6	52.9	100.0	1201	90.2	5.6	3.5	0.7	100.0	566
Ընդամենը	32.0	1.5	66.5	100.0	6430	61.0	33.4	5.1	0.5	100.0	2152

Ըստ ՀԺԱՀ-ի տվյալների կանանց 32%-ը հարցման պահին զբաղված է եղել; նրանց 67%-ը չի աշխատել հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում (Գծապատկեր 3.1): Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված կանանց 61 տոկոսն աշխատել է ամբողջ տարին, մինչդեռ մեկ երրորդը կատարել է սեզոնային աշխատանքներ: Երիտասարդ կանայք՝ հատկապես 15-19 և 20-24 տարիքային խմբերում գտնվողները, ավելի քիչ էին հակված զբաղված լինելու, քան այլ տարիքային խմբերում գտնվողները, միգրացիոն, պայմանավորված աշխատանքի շուկայում ընդգրկված լինելու փոխարեն դպրոց կամ որևէ այլ ուսումնական դասընթացներ հաճախումներով: Տարիքի հետ կնոջ մոտ աճում է նրա զբաղված լինելու ցանկությունը:

Գծապատկեր 3.1 15-49 տարեկան կանանց տեսակարար կշիռն ըստ զբաղվածության կարգավիճակի



30 և բարձր տարիքի կանանց ավելի քան մեկ երրորդը զբաղված է եղել հարցման պահին: Ի լրումն վերը նշվածին, պետք է նշել, որ կանայք, ովքեր զբաղված էին հարցման պահին, ավելի շատ էին հակված տարվա կտրվածքով ունենալու կայուն աշխատանք, քան ավելի երիտասարդները:

Որքան բազմազավակ են կանայք, այնքան շատ է նրանց զբաղվածության մակարդակը կամ զբաղված լինելու հակվածությունը հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Այնուամենայնիվ, այն ավելի հաճախ եղել է սեզոնային, քան մշտական աշխատանք. երեխա չունեցող կամ 1-2 երեխա ունեցող զբաղված կանայք ավելի շատ են աշխատել ամբողջ տարին (71% և 68%), քան 3-4 կամ 5 և ավելի երեխա ունեցողները (47% և 30%): Գյուղաբնակ կանայք ավելի շատ են ունեցել սեզոնային աշխատանք, քան քաղաքաբնակ կանայք (62%` 11%-ի դիմաց): Գեղարքունիքում գրանցվել է կանանց զբաղվածության ամենաբարձր մակարդակը (հարցման պահին զբաղված կանանց 51%-ը), սակայն ամբողջ տարվա ընթացքում զբաղվածության կտրվածքով ամենացածր մակարդակը (զբաղված կանանց 30%): Շիրակի մարզն ունի կանանց զբաղվածության ամենացածր մակարդակը (22%), սակայն **ամբողջ տարվա ընթացքում զբաղված լինելու կտրվածքով`** ամենաբարձր համամասնությունը (զբաղված կանանց 95%): Չնայած այն փաստին, որ կրթական մակարդակի և զբաղվածության կարգավիճակի միջև գոյություն ունի դրական կախվածություն, **բարձրագույն կրթություն ունեցող կանանց կեսից պակասն է զբաղված եղել հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում:**

Աղյուսակ 3.4.2-ը ներկայացնում է համապատասխան տեղեկատվություն տղամարդկանց համար: Ընդհանուր առմամբ, տղամարդկանց զբաղվածության ցուցանիշներն ավելի բարձր են, քան կանանցը. այսպես, տղամարդկանց 56%-ը զբաղված է եղել հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, իսկ 21%-ը հայտնել է, որ աշխատանք է փնտրել հարցման պահին (Գծապատկեր 3.2):

15-19 տարեկան տղամարդկանց երկու երրորդը հարցման պահին սովորել է դպրոցում` ի տարբերություն միայն 9%-ի, որը զբաղված է եղել հարցման պահին: 20-24 տարեկան տղամարդկանց միջև աշխատանք փնտրողների և զբաղվածների թվաքանակը գրեթե նույնն է (համապատասխանաբար` 31 և 37%): 25 և բարձր տարիքի տղամարդկանց կեսից ավելին հարցման պահին զբաղված է եղել, մինչդեռ 5-ից մոտավորապես 1-ը աշխատանք է փնտրել: Հարցվողների մեջ որևէ միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց զբաղվածության մակարդակ հարցման պահին գլխավոր համակցության համեմատությամբ եղել է ավելի բարձր, սակայն, ինչպես կանանց մոտ, համեմատաբար ավելի բարձր կրթություն ունեցող տղամարդկանց միայն կեսից ավելին է զբաղված եղել հարցման պահին:

Աղյուսակ 3.4.2 Տղամարդկանց տնտեսական ակտիվության կարգավիճակը


Տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի կամ (եթե զբաղված չի) նրա հիմնական զբաղմունքի՝ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Սղամարդկանց տնտեսական ակտիվության կարգավիճակը (%)								Տղամարդկանց թվաքանակը (մարդ)
	Աշխատել է հարցման պահին	Աշխատել է 12 ամիսներից	Հաճախել է դպրոցի հաստատություն	Փնտրել է աշխատանք	Ոչնչով չի զբաղվել	Ի վիճակի չէ եղել աշխատելու, հաշմանդամ է	Այլ	Ընդամենը	
Տարիքը									
15-19	8.7	1.8	66.7	15.7	3.3	3.0	0.7	100.0	263
20-24	37.1	9.8	8.3	30.6	9.2	2.1	2.9	100.0	215
25-29	54.1	13.9	1.3	22.7	7.4	0.6	0.0	100.0	194
30-34	53.0	15.9	0.0	22.4	7.5	1.1	0.0	100.0	205
35-39	58.0	11.1	0.0	19.3	8.9	1.6	1.1	100.0	237
40-44	55.1	10.5	0.5	21.8	8.3	3.7	0.0	100.0	275
45-49	63.5	4.7	0.0	16.2	10.9	4.6	0.0	100.0	203
50-54	53.7	5.3	0.0	25.8	9.8	4.3	1.0	100.0	126
Ամուսնական կարգավիճակը									
Երբևէ չամուսնացած	22.0	5.9	36.3	25.8	6.8	2.2	1.0	100.0	530
Հարցման պահին ամուսնացած	57.9	10.7	0.4	19.2	8.5	2.8	0.5	100.0	1161
Նախկինում ամուսնացած	(48.1)	(4.6)	(0.0)	(32.1)	(8.6)	(2.0)	(4.7)	(100.0)	28
Բնակավայրը									
Քաղաքային	42.6	7.8	12.9	23.6	9.9	2.5	0.8	100.0	1024
Գյուղական	52.6	11.2	9.4	18.3	5.2	2.8	0.5	100.0	695
Մարզը									
Երևան	40.8	8.0	13.4	23.9	10.9	1.6	1.3	100.0	582
Արագածոտն	75.5	6.5	9.4	0.0	7.9	0.0	0.7	100.0	78
Արարատ	64.7	6.5	9.4	11.5	2.9	4.3	0.7	100.0	177
Արմավիր	24.1	0.0	9.7	60.0	2.1	4.1	0.0	100.0	172
Գեղարքունիք	83.8	4.3	2.6	3.4	4.3	1.7	0.0	100.0	124
Լոռի	36.8	35.6	5.7	10.3	6.9	3.4	1.1	100.0	119
Կոտայք	41.7	3.9	18.1	13.4	19.7	3.1	0.0	100.0	137
Շիրակ	35.3	12.9	15.1	28.1	5.8	2.9	0.0	100.0	161
Սյունիք	49.6	12.6	10.9	16.0	4.2	5.9	0.8	100.0	65
Վայոց ձոր	26.7	30.7	16.8	10.9	10.9	2.0	2.0	100.0	25
Տավուշ	62.0	5.1	10.8	15.8	4.4	1.9	0.0	100.0	79
Կրթությունը									
Տարրական/միջին	34.2	8.3	20.0	25.3	6.4	5.8	0.1	100.0	245
Միջնակարգ	38.8	10.4	13.9	25.8	7.5	2.9	0.7	100.0	510
Միջնակարգ-մասնագիտական	53.7	10.0	3.2	20.8	9.7	1.8	0.8	100.0	588
Բարձրագույն	54.3	6.6	15.6	14.0	7.0	1.3	1.1	100.0	376
Ընդամենը	46.7	9.1	11.5	21.4	8.0	2.6	0.7	100.0	1719

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Տղամարդկանց մեջ հարցման պահին զբաղվածությունն ավելի բարձր է եղել գյուղական բնակավայրերում (53 տոկոս), քան քաղաքայինում (43 տոկոս), ընդ որում աշխատանք է փնտրել քաղաքաբնակ տղամարդկանց մոտավորապես մեկ չորրորդը: Հարցման պահին Արմավիրի, Վայոց Ձորի, Շիրակի և Լոռվա մարզերում գրանցվել է զբաղվածության ցածր մակարդակ. այդ մարզերում տղամարդկանց 24-ից 37 տոկոսը հարցման պահին զբաղված է եղել: Արագածոտնը, Արարատը և Գեղարքունիքը հանդիսանում են հարցման պահին զբաղված տղամարդկանց ամենաբարձր համամասնությամբ մարզերը (համապատասխանաբար՝ 76 տոկոս, 65 տոկոս, և 84 տոկոս): Հատկանշական է, որ այդ մարզերից յուրաքանչյուրում հարցման պահին զբաղված տղամարդկանց ավելի քան 60 տոկոսն ընդգրկված է եղել գյուղատնտեսական աշխատանքներում իրենց սեփական հողի վրա (տվյալները բերված չեն):

Գծապատկեր 3.2 15-54 տարեկան տղամարդկանց տեսակարար կշիռն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի



Հայաստանի ՀԱՐ 2000թ.

3.5 Ձբաղմունքը

Հետազոտությունում այն հարցվողները, ովքեր նշել են, որ զբաղված են եղել հարցման պահին, հարցվել են իրենց կողմից կատարած աշխատանքի բնույթի մասին: Այս պատասխանները գրանցվել են բառացի և հանդիսացել են որպես հիմք զբաղմունքի կողավորման համար, որը կատարվել է ՀՀ ԱՎԾ-ի կենտրոնական գրասենյակում:

Ինչպես երևում է աղյուսակներ 3.5.1-ում և 3.5.2-ում, զբաղված և՛ տղամարդկանց, և՛ կանանց գրեթե մեկ երրորդն աշխատել է գյուղատնտեսության հատվածում: Գյուղական համայնքներում, և՛ կանանց և՛ տղամարդկանց համար առաջնային զբաղմունք է հանդիսացել գյուղատնտեսական աշխատանքը իրենց սեփական հողի վրա: Քաղաքային բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքները տարածված չեն: Քաղաքաբնակ կանանց 60 տոկոսը կատարել է մասնագիտական, տեխնիկական կամ ղեկավարման աշխատանքներ: Քաղաքաբնակ տղամարդկանց 36 տոկոսը կատարել է մասնագիտական, տեխնիկական կամ ղեկավարման աշխատանքներ, 31 տոկոսն աշխատել է որպես հմուտ բանվոր, մինչդեռ 15 տոկոսն աշխատել է առևտրի և ծառայությունների բնագավառում: 15-19 տարեկան կանանց 59 տոկոսը հիմնականում զբաղված է եղել գյուղատնտեսական աշխատանքներով իրենց սեփական հողի վրա: 20-ից բարձր տարիքի կանանց 40 տոկոսից ավելին կատարել է մասնագիտական աշխատանքներ:

Երեխաների թվաքանակի և անձի զբաղմունքի միջև գոյություն ունի կապ: **Հինգից ավելի երեխաներ ունեցող կանայք ավելի հակված են եղել աշխատել իրենց սեփական հողի վրա, քան կատարել այլ տեսակի աշխատանքներ: Երեքից քիչ երեխաներ ունեցող կանայք ավելի հակված են եղել կատարել մասնագիտական աշխատանքներ:** Այն մարզերում, որտեղ գյուղատնտեսական աշխատանքները տարածված չեն, ինչպիսիք են Երևանը և Շիրակը, մեծ թվով կանայք կատարել են մասնագիտական աշխատանքներ: Համեմատաբար բարձր կրթությամբ աշխատող կանայք ավելի հաճախ են վարձվել որպես մասնագետներ: Այսպես, միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցող կանանց 46 տոկոսը և բարձրագույն կրթությամբ կանանց 86 տոկոսը կատարել են մասնագիտական աշխատանքներ: Բարձրագույն կրթություն ունեցող տղամարդիկ նույնպես ավելի հաճախ են կատարել մասնագիտական աշխատանքներ (62 տոկոս):

Աղյուսակ 3.5.1 Կանանց զբաղվածության կարգավիճակը

Հարցման պահին աշխատող կանանց տոկոսային բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի (գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական) և մշակվող հողատարածքի տեսակի կամ ոչ գյուղատնտեսական աշխատանքի տեսակի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Գյուղատնտեսական				Ոչ գյուղատնտեսական (%)								
	Սեփական հող.	Ընտանեկան հող.	Վարձակառկ հող.	Այլ հող.	Մասնագետ/տեխ. անձնակազմ/ ղեկավար		Առևտուր և ծառայություններ	Բանվոր		Տնային ծառայություն	Այլ/չգիտի/տիպաչկան	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)
					Պլ.	Պար		Ռնուտ	Ոչ հնուտ				
Տարիքը													
15-19	58.7	13.6	0.0	0.0	9.6	0.7	4.0	8.9	1.5	1.5	1.6	100.0	75
20-24	22.1	3.0	1.4	0.9	43.1	7.2	14.9	6.0	1.5	0.0	0.0	100.0	226
25-29	28.8	2.5	0.2	0.7	46.6	8.4	7.0	4.7	0.9	0.0	0.0	100.0	237
30-34	32.4	3.5	0.2	1.5	43.9	3.0	8.7	3.0	3.7	0.0	0.0	100.0	281
35-39	29.2	2.8	0.6	1.5	46.9	4.9	5.6	4.8	3.5	0.2	0.0	100.0	407
40-44	23.3	4.0	0.6	0.1	41.6	8.8	6.5	8.9	5.7	0.0	0.4	100.0	441
45-49	19.6	2.8	0.8	1.0	48.8	5.8	8.4	5.1	6.7	0.8	0.0	100.0	389
Ամուսնական կարգավիճակը													
Երբևէ չամուսնացած	15.9	2.8	0.3	0.6	47.8	10.1	11.7	7.7	2.4	0.3	0.3	100.0	379
Հարցման պահին ամուսնացած	31.4	3.8	0.8	0.7	43.2	4.6	6.9	4.7	3.6	0.2	0.1	100.0	1466
Նախկինում ամուսնացած	15.0	3.0	0.0	2.5	41.9	9.9	7.9	9.9	9.7	0.3	0.0	100.0	211
Կենդանի երեխաների թվաքանակը													
0	16.4	3.0	0.2	0.5	48.0	9.8	11.2	7.3	3.0	0.2	0.3	100.0	458
1-2	19.2	2.7	0.3	1.3	53.5	6.2	6.9	6.0	3.2	0.5	0.2	100.0	895
3-4	42.3	4.7	1.1	0.6	29.7	3.9	7.2	4.6	5.7	0.0	0.1	100.0	662
5+	(58.8)	(7.8)	(2.4)	(0.0)	(18.1)	(0.0)	(3.4)	(2.4)	(7.1)	(0.0)	(0.0)	(100.0)	41
Բնակավայրը													
Քաղաքային	4.7	1.1	0.0	0.2	59.7	8.6	12.0	7.8	5.1	0.5	0.2	100.0	1136
Գյուղական	54.2	6.5	1.4	1.7	24.4	3.2	2.8	3.2	2.7	0.0	0.0	100.0	920
Մարզը													
Երևան	1.1	0.0	0.0	0.0	62.9	7.7	16.1	7.3	4.4	0.2	0.2	100.0	623
Արագածոտն	26.4	13.2	0.8	1.6	35.7	5.4	6.2	6.2	4.7	0.0	0.0	100.0	74
Արարատ	43.8	0.0	0.0	0.0	42.3	5.8	1.5	4.4	2.2	0.0	0.0	100.0	156
Արմավիր	51.4	5.9	0.9	4.5	26.4	2.7	3.2	2.3	2.3	0.5	0.0	100.0	246
Գեղարքունիք	61.9	3.6	1.6	0.8	16.2	4.9	2.0	5.3	3.2	0.4	0.0	100.0	244
Լոռի	21.8	14.3	0.8	0.8	37.0	3.4	5.9	11.8	3.4	0.0	0.8	100.0	142
Կոտայք	34.2	0.6	1.3	0.6	32.3	5.8	9.0	9.7	6.5	0.0	0.0	100.0	176
Շիրակ	3.7	0.0	0.0	0.0	79.6	10.2	3.7	1.9	0.0	0.9	0.0	100.0	134
Սյունիք	12.3	15.5	0.0	1.1	46.5	7.0	4.8	3.7	8.6	0.5	0.0	100.0	103
Վայոց ձոր	43.3	1.6	0.0	1.6	29.9	8.0	5.3	4.3	4.8	0.0	1.1	100.0	46
Տավուշ	45.0	1.0	2.0	0.0	32.5	6.5	5.0	1.0	7.0	0.0	0.0	100.0	112
Կրթությունը													
Տարրական/միջին	60.6	6.3	3.2	3.7	3.7	0.2	8.1	3.8	10.4	0.0	0.0	100.0	136
Միջնակարգ	54.0	6.2	0.7	1.8	8.7	5.0	8.6	7.6	7.1	0.0	0.3	100.0	545
Միջնակարգ-մասնագիտական	19.9	3.4	0.4	0.5	45.8	8.0	11.0	7.0	3.3	0.6	0.2	100.0	829
Բարձրագույն	1.9	0.4	0.2	0.0	86.0	6.0	2.5	2.5	0.5	0.0	0.0	100.0	547
Ընդամենը	26.8	3.5	0.6	0.9	43.9	6.2	7.9	5.8	4.0	0.3	0.1	100.0	2056

Մասնագետ/Տեխ. անձնակազմ/Ղեկավար ներառում է մասնագիտական, տեխնիկական և ղեկավար մասնագիտությունները: Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Աղյուսակ 3.5.2 Տղամարդկանց զբաղվածության կարգավիճակը

Հարցման պահին աշխատող տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի (գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական) և մշակվող հողատարածքի տեսակի կամ ոչ գյուղատնտեսական աշխատանքի տեսակի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Գյուղատնտեսական			Ոչ գյուղատնտեսական								Տղամարդկանց թվաքանակը (մարդ)	
	Սեփական հող.	Ընտանեկան հող.	Վարձակալված հող.	Այլ հող.	Մասնագետ/տեխ. անձ-զրանակազմ/սենյա-ծառայուկային աշխ.	Վաճառք և սեռային թյուններ	Բանվոր	Ոչ հմուտ	Ոչ հմուտ	Տնային ծառայություն	Ընդամենը		
Տարիքը													
15-19	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	23
20-24	25.9	5.8	2.7	1.7	9.3	0.0	18.0	26.4	3.7	6.6	100.0	80	
25-29	26.9	0.0	0.0	1.3	31.8	3.2	14.7	12.8	6.1	3.2	100.0	105	
30-34	32.4	6.3	1.5	0.0	23.2	2.3	9.5	18.3	3.0	3.4	100.0	109	
35-39	36.2	2.2	0.8	0.0	22.5	1.4	5.7	22.4	4.1	4.8	100.0	138	
40-44	22.6	2.5	1.0	0.9	24.0	1.7	9.5	27.2	9.1	1.6	100.0	152	
45-49	14.3	0.0	0.8	1.5	31.6	2.7	7.9	28.5	9.5	3.2	100.0	129	
50-54	12.4	0.0	0.7	0.0	25.2	0.0	11.5	38.0	9.6	2.5	100.0	68	
Ամուսնական կարգավիճակը													
Երբևէ չամուսնացած	36.6	3.5	2.3	1.2	17.1	2.0	12.0	18.4	3.9	3.0	100.0	116	
Հարցման պահին ամուսնացած	24.6	2.1	0.8	0.7	24.7	1.7	9.8	25.3	6.9	3.4	100.0	672	
Նախկինում ամուսնացած	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	13	
Կենդանի երեխաների թվաքանակը													
0	35.0	3.2	1.7	0.9	21.2	1.5	10.8	18.0	2.8	4.9	100.0	160	
1-2	16.1	1.8	0.7	0.4	31.4	1.8	12.5	23.6	8.3	3.3	100.0	364	
3-4	33.2	2.6	0.8	1.2	16.4	1.8	7.2	27.8	6.2	2.8	100.0	261	
5+	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	17	
Բնակավայրը													
Քաղաքային	3.9	0.5	0.1	0.3	35.5	2.1	15.1	31.1	7.5	4.0	100.0	436	
Գյուղական	53.6	4.4	2.0	1.3	10.2	1.2	4.3	15.2	5.0	2.7	100.0	365	
Կրթությունը													
Տարրական/միջին	35.3	5.8	3.1	4.9	4.4	0.0	4.5	34.4	6.2	1.4	100.0	84	
Միջնակարգ	38.1	2.4	0.8	0.0	9.8	2.7	9.1	27.2	8.1	1.7	100.0	198	
Միջնակարգ-մասնագիտական	28.0	2.7	1.2	0.6	13.3	1.3	13.7	28.0	7.5	3.7	100.0	316	
Բարձրագույն	9.6	0.0	0.0	0.0	62.1	2.1	8.1	9.8	2.9	5.3	100.0	205	
Ընդամենը	26.6	2.3	1.0	0.7	24.0	1.7	10.2	23.8	6.3	3.4	100.0	802	

Նշում. Մասնագետ/Տեխ. անձնակազմ/Ղեկավար ներառում է մասնագիտական, տեխնիկական և ղեկավար մասնագիտությունները: Աստղանիշը ցույց է տալիս, որ թվերը հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սղված են:

3.6 Վաստակը

Աղյուսակ 3.6-ը ներկայացնում է հարցման պահին աշխատող կանանց տոկոսային բաշխումն ըստ գործատուի և վաստակի տեսակի: Այն կանայք, ովքեր աշխատել են հարցման պահին, հարցվել են իրենց գործատուի վերաբերյալ, թե արդյո՞ք նրանք աշխատում են բարեկամի, ոչ բարեկամի մոտ, թե ինքնազբաղված են: Ի լրումն դրան, նրանք հարցվել են, թե իրենց վաստակը վճարվում է կանխիկ, բնեղեն ձևով, թե ընդհանրապես չի վճարվում: **Ընդհանուր առմամբ, աշխատող կանանց երկու երրորդը վաստակել է կանխիկ դրամ, 30 տոկոսը ոչ մի վճար չի ստացել (Գծապատկեր 3.3):**


Աղյուսակ 3.6 Գործատու և վաստակի տեսակներ

Հարցման պահին աշխատող կանանց տոկոսային բաշխումն ըստ գործատուի և վաստակի տեսակի (կանխիկ, բնեղեն, անվճար), ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Աշխատում է հնքնագրադված		Աշխատում է օտար մարդու մոտ		բարեկամի մոտ		Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)
	Վաստակում է կանխիկ	Չի վաստակում կանխիկ	Վաստակում է կանխիկ	Չի վաստակում կանխիկ	Վաստակում է կանխիկ	Չի վաստակում կանխիկ		
Տարիքը								
15-19	3.4	28.7	17.4	1.8	4.4	44.2	100.0	75
20-24	3.1	12.0	69.2	0.0	1.1	14.6	100.0	226
25-29	1.7	15.4	64.1	0.5	2.6	15.7	100.0	237
30-34	4.4	16.4	56.7	1.2	0.8	20.6	100.0	281
35-39	4.4	14.3	58.6	2.0	2.6	18.1	100.0	407
40-44	3.7	13.2	60.7	1.2	3.5	17.7	100.0	441
45-49	1.6	9.6	69.4	1.7	2.9	14.8	100.0	389
Բնակավայրը								
Քաղաքային	4.4	3.9	83.4	1.5	3.3	3.5	100.0	1136
Գյուղական	1.8	26.2	33.6	1.0	1.5	35.9	100.0	920
Մարզը								
Երևան	4.4	1.3	87.9	1.3	4.4	0.7	100.0	623
Արագածոտն	3.9	20.2	48.1	3.9	7.0	17.1	100.0	74
Արարատ	4.4	11.7	51.1	1.5	1.5	29.9	100.0	156
Արմավիր	1.8	2.3	36.4	0.5	1.8	57.3	100.0	246
Գեղարքունիք	0.4	65.2	30.4	0.4	0.0	3.6	100.0	244
Լոռի	3.4	0.8	50.4	5.0	0.8	39.5	100.0	142
Կոտայք	6.5	8.4	53.5	0.6	2.6	28.4	100.0	176
Շիրակ	0.9	4.6	90.7	0.9	1.9	0.9	100.0	134
Սյունիք	0.0	8.6	66.8	0.5	1.1	23.0	100.0	103
Վայոց ձոր	7.0	2.7	44.4	1.6	2.7	41.7	100.0	46
Տավուշ	2.5	41.5	48.5	0.0	1.0	6.5	100.0	112
Կրթությունը								
Տարրական/միջին	5.8	32.5	19.8	1.3	1.0	39.6	100.0	136
Միջնակարգ	3.6	27.6	31.5	1.1	2.5	33.6	100.0	545
Միջնակարգ-մասնագիտական	3.5	9.6	67.8	1.8	2.4	15.0	100.0	829
Բարձրագույն	1.7	1.9	90.8	0.7	3.0	1.8	100.0	547
Ջրաղմուկը								
Գյուղատնտեսական	1.2	42.0	1.8	0.7	0.9	53.4	100.0	655
Ոչ գյուղատնտեսական	4.2	0.7	88.9	1.6	3.2	1.5	100.0	1401
Ընդամենը	3.2	13.9	61.1	1.3	2.5	18.0	100.0	2056

Նշում: “Վարձատրվում է կանխիկ” ներառում է ինչպես այն կանանց, ովքեր ստանում են միայն կանխիկ վճար, այնպես էլ այն կանանց, ովքեր ստանում են և՛ կանխիկ, և՛ բնեղեն: “Չի վարձատրվում կանխիկ” ներառում է ինչպես այն կանանց, ովքեր ստանում են միայն բնեղեն, այնպես էլ այն կանանց ովքեր չեն վարձատրվում:

Գծապատկեր 3.3 Հարցման պահին զբաղված 15-49 տարեկան կանանց տեսակարար կշիռն ըստ վաստակի տեսակի



Հայաստանի ՀԱԲ 2000թ.

Համաձայն տվյալների, աշխատող քաղաքաբնակ կանանց մեծամասնությունը վաստակել է դրամ ոչ բարեկամի մոտ՝ վարձու աշխատանքի միջոցով: Գյուղական բնակավայրերում, այնուամենայնիվ, զբաղված կանանց գրեթե երկու երրորդը չի վարձատրվել կանխիկ դրամով և հիմնականում աշխատել է բարեկամների մոտ կամ եղել է ինքնազբաղված: Համեմատաբար բարձր կրթությամբ կանանց 91 տոկոսն աշխատել է ոչ բարեկամների մոտ և վարձատրվել է կանխիկ ձևով: Մինչդեռ, միայն տարրական/միջին կրթություն ունեցող կանանց երեք չորրորդը և միջնակարգ կրթություն ունեցող կանանց երկու երրորդը կամ վարձատրվել է բնեղեն ձևով, կամ ընդհանրապես չի վարձատրվել:

3.7 Վաստակի օգտագործումը

Աշխատող և կանխիկ դրամ վաստակող կանայք հարցվել են, թե ով է հանդիսանում իրենց վաստակի տնօրինման վերաբերյալ առաջնային որոշում ընդունողը: Այս տեղեկատվությունը թույլ է տալիս գնահատել կնոջ կողմից սեփական վաստակի վերահսկման աստիճանը: Աղյուսակ 3.7-ը ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում կնոջ կողմից սեփական վաստակի վերահսկումն ըստ հիմնական բնութագրիչների: Կանխիկ դրամ վաստակող կանանց կեսն ինքնուրույն, իսկ 41%-ը մեկ այլ անձի հետ համատեղ է որոշում, թե ինչպես ծախսել գումարները, սակայն 9%-ը վաստակած դրամի վերաբերյալ ընդհանրապես որոշում չի կայացնում: Ամուսնացած կանայք ավելի հակված են որոշումներ ընդունել մեկ այլ անձի հետ համատեղ, մինչդեռ նախկինում ամուսնացած կան երբեք չամուսնացած կանայք նախընտրում են որոշումներ կայացնել ինքնուրույն: Քաղաքաբնակ կանայք ավելի անկախ են փող ներառող որոշումներում, քան գյուղաբնակ կանայք:

Տնային տնտեսության ծախսերում կանանց աշխատավարձի կարևորությունը գնահատելու նպատակով աշխատող և կանխիկ դրամ վաստակող կանայք հարցվել են, թե տնային տնտեսության ծախսերն ինչ համաձայնությամբ են վճարվում նրանց վաստակից: Այս տեղեկատվությունը թույլ է տալիս գնահատել տնային տնտեսությունների բյուջեներում կանանց վաստակի հարաբերական կարևորությունը: Ինչպես երևում է աղյուսակ 3.7-ում, կանանց կողմից վաստակած դրամը ծածկել է տնային տնտեսությունների ծախսերի միայն մի մասը. **կանանց 27 տոկոսը նշել է, որ նրանց վաստակը աննշան կամ գրեթե աննշան է տնային տնտեսությունների ծախսերի մեջ**, մինչդեռ կանանց 51 տոկոսը նշել է, որ նրանց վաստակը ծածկում է տնային տնտեսությունների ծախսերի գրեթե կեսը: Կանանց միայն 5 տոկոսն է նշել, որ նրանց վաստակն ամբողջովին ծածկում է տնային տնտեսությունների ծախսերը: Այնուամենայնիվ, նախկինում ամուսնացած կանանց 18 տոկոսը նշել է, որ նրանց վաստակն ամբողջովին ծածկում է տնային տնտեսությունների ծախսերը:

Աղյուսակ 3.7 Վաստակած գումարի ծախսման ուղղությամբ որոշումների կայացումը և տնային տնտեսության ծախսերի մեջ ունեցած ներդրումը

Կանխիկ գումար վաստակող կանանց տոկոսային բաշխումն ըստ այդ գումարների օգտագործման վերաբերյալ որոշում կայացնող անձի և տնային տնտեսության ծախսերի մեջ վաստակի հարաբերակցության, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Անձը, որը որոշում է ինչպես ծախսել գումարը				Վաստակած գումարների մասնաբաժինը տնային տնտեսության ծախսերի մեջ					Կանխիկ գումար վաստակող կանանց թվաքանակը (մարդ)
	Միայն ինքը	Միա սին	Մեկ ուրիշը	Ընդամենը	Համար-յա ոչինչ	Կեսից քիչ	Կեսը կամ ավելին Ամբողջը	Ընդամենը		
Տարիքը										
15-19	*	*	*	*	*	*	*	*	*	19
20-24	59.2	25.0	15.8	100.0	35.4	47.4	13.9	3.3	100.0	166
25-29	45.2	40.7	14.1	100.0	26.7	55.3	15.0	3.1	100.0	162
30-34	37.8	51.7	10.6	100.0	25.6	57.4	13.8	3.1	100.0	174
35-39	49.7	39.8	10.5	100.0	25.0	51.9	17.6	5.5	100.0	267
40-44	53.1	40.8	6.1	100.0	23.5	53.8	17.9	4.7	100.0	299
45-49	50.7	45.9	3.4	100.0	24.5	44.7	23.3	7.5	100.0	287
Ամուսնական կարգավիճակը										
Երբևէ չամուսնացած	70.8	18.3	10.9	100.0	32.5	45.2	17.3	5.0	100.0	302
Հարցման պահին ամուսնացած	35.6	54.3	10.1	100.0	26.7	54.7	16.4	2.3	100.0	902
Նախկինում ամուսնացած	88.5	9.4	2.1	100.0	14.7	43.6	23.9	17.8	100.0	170
Կենդանի երեխաների թվաքանակը										
0	65.3	23.5	11.3	100.0	30.3	45.6	18.8	5.4	100.0	362
1-2	47.5	45.2	7.3	100.0	23.1	54.5	18.5	3.9	100.0	674
3-4	38.1	51.1	10.7	100.0	29.2	50.1	14.4	6.4	100.0	325
5+	*	*	*	*	*	*	*	*	*	12
Բնակավայրը										
Քաղաքային	53.8	39.0	7.3	100.0	25.5	50.0	19.4	5.0	100.0	1035
Գյուղական	38.1	46.5	15.4	100.0	29.4	54.9	11.6	4.2	100.0	340
Մարզը										
Երևան	55.5	38.8	5.7	100.0	23.1	49.1	22.6	5.3	100.0	602
Արագածոտն	43.4	42.1	14.5	100.0	26.3	60.5	10.5	2.6	100.0	44
Արարատ	50.0	42.3	7.7	100.0	37.2	48.7	14.1	0.0	100.0	89
Արմավիր	43.2	48.9	8.0	100.0	47.7	39.8	10.2	2.3	100.0	98
Գեղարքունիք	32.9	42.1	25.0	100.0	35.5	56.6	6.6	1.3	100.0	75
Լոռի 49.2	44.6	6.2	100.0	29.2	40.0	18.5	12.3	100.0	78	
Կոտայք	56.7	30.9	12.4	100.0	28.9	47.4	15.5	8.2	100.0	110
Շիրակ	40.6	47.5	11.9	100.0	6.9	74.3	14.9	4.0	100.0	126
Սյունիք	46.5	37.8	15.7	100.0	26.8	55.1	14.2	3.9	100.0	70
Վայոց ձոր	42.6	38.6	18.8	100.0	30.7	53.5	15.8	0.0	100.0	25
Տավուշ	45.2	47.1	7.7	100.0	29.8	49.0	14.4	6.7	100.0	58
Կրթությունը										
Տարրական/միջին	(50.5)	(26.0)	(23.6)	(100.0)	(14.7)	(57.5)	(19.7)	(8.1)	(100.0)	36
Միջնակարգ	52.6	33.1	14.3	100.0	22.0	51.5	21.2	5.3	100.0	205
Միջնակարգ-մասնագիտական	49.4	39.8	10.8	100.0	30.6	49.7	14.9	4.8	100.0	610
Բարձրագույն	49.4	46.1	4.6	100.0	24.2	52.5	18.9	4.4	100.0	523
Ընդամենը	49.9	40.8	9.3	100.0	26.5	51.2	17.5	4.8	100.0	1374

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ թվերը հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա:

1. Ամուսնու կամ մեկ այլնի հետ
2. Ներառում է ամուսնուն

Աղյուսակ 3.8-ը ներկայացնում է կնոջ վաստակի օգտագործման երկու չափանիշների միջև տարբերությունները: Համաձայն աղյուսակ 3.8-ի, հարցման պահին ամուսնացած կանանց կեսից

փոքր-ինչ ավելին իրենց ամուսինների հետ համատեղ են որոշել, թե ինչպես օգտագործել վաստակած դրամը: Ամուսնացած կանանց մոտավորապես 10 տոկոսն ընդհանրապես ձայն չի ունեցել, թե ինչպես օգտագործել վաստակած դրամը: Հարցման պահին չամուսնացած կանանց երեք չորրորդն ինքնուրույն է որոշումներ կայացրել, թե ինչպես օգտագործել վաստակած դրամը, մինչդեռ 8 տոկոսն ընդհանրապես ձայն չի ունեցել այդ հարցի շուրջ: Հատկանշական է, որ գրեթե բոլոր ամուսնացած կանայք վերահսկել են իրենց վաստակը կամ ամուսնու հետ համատեղ են որոշումներ կայացրել՝ անկախ տնային տնտեսությունների ծախսերում նրանց ունեցած ներդրումից:

Աղյուսակ 3.8 Վաստակի վերահսկումն ըստ տնային տնտեսության ծախսերի մեջ ունեցած իրենց ներդրման

Կանխիկ գումար վաստակող կանանց տոկոսային բաշխումն ըստ դրանց ծախսման ուղղությամբ որոշումներ կայացնողի և հարցման պահին ամուսնական կարգավիճակի, համաձայն տնային տնտեսության ընդհանուր ծախսերում վաստակի հարաբերակցությանը, Հայաստան 2000թ.

	Հարցման պահին ամուսնացած						Չամուսնացած					
	Սիային տնային տնտեսության ծախսերում կիճը	Ամուսնու հետ միասին	Մեկ ուրիշի հետ միասին	Միայն ամուսնու սինը	Միայն մեկ ուրիշը	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)	Սիային կիճը	Մեկ ուրիշի հետ միասին	Սիային մեկ ուրիշը	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)
Համարյա ոչ մի	40.8	45.6	1.9	9.7	2.1	100.0	241	87.4	6.6	6.0	100.0	123
Կեսից քիչ	33.8	53.4	2.3	8.6	1.9	100.0	493	69.4	20.4	10.1	100.0	210
Կեսը կամ ավելին	28.8	62.4	2.0	6.4	0.4	100.0	148	78.6	17.1	4.4	100.0	93
